ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.08.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 76/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 15.07.2016թ. և 20.07.2016թ. ներկայացրած բողոքները (այսուհետ նաև՝ ԳԲԽ-76/16 բողոք) և կից փաստաթղթերը, «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի 22.07.2016թ. գրությունները, «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, Ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր) և ԳԲԽ-76/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 01.08.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 15.07.2016թ. և 20.07.2016թ. ներկայացրած բողոքներով «Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կողմից դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը ներկայացված բողոքներով տեղեկացրել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի 27-րդ և 33-րդ չափաբաժիններին մասնակցելու համար:

Ընկերությունը բողոքներով տեղեկացրել է հետևյալը.

1. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.07.2016թ. նիստի թիվ 9 արձանագրության 3-րդ կետով՝ թիվ 27 չափաբաժնի մասով, «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժել է՝ ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմնավորմամբ:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.07.2016թ. նիստի թիվ 10 արձանագրության 2-րդ կետով՝ թիվ 33 չափաբաժնի մասով, «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժել է՝ ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմնավորմամբ:

Ընկերությունը, մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդված 1-ին մասով սահմանված պահանջը, բողոքարկման խորհրդին խնդրել է.

1. կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել կողմերի միջև պայմանագրի կնքման գործընթացը թիվ 27-րդ և 33-րդ չափաբաժինների մասով,

2. դադարեցնել գնահատող հանձնաժողովի 14.07.2016թ. նիստի թիվ 9 արձանագրության 3-րդ կետով՝ թիվ 27 չափաբաժնի մասով և գնահատող հանձնաժողովի 18.07.2016թ. նիստի թիվ 10 արձանագրության 2-րդ կետով՝ թիվ 33 չափաբաժնի մասով «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումները,

«Խաչպար» ՍՊԸ-ն ի լրումն բողոքների, 22.07.2016թ. գրությամբ ներկայացրել է Ընթացակարգի թիվ 27-րդ և 33-րդ չափաբաժիններում հայտ ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերի աղյուսակները՝ համաձայն գնային առաջարկների, ինչպես նաև միևնույն հումքից՝ դիքլորիզոցիանուրաթթվի նատրիումական աղից, տարբեր արտադրողների կողմից հաբերի տեսքով, որպես ախտահանիչ միջոց արտադրվող անվանումների համար, որպես նորմա սահմանված և ՀՀ ԱՆ մեթոդական հրահանգներով հաստատված տվյալների համեմատական աղյուսակը, որի վերլուծությունը ցույց է տալիս, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող թվային պարամետրները առկա են միայն մեկ՝ «Պրեսեպտ» բրենդային անվանում ունեցող նյութի մոտ:

Ընկերությունը ներկայացված բողոքներով նշել է, Պատվիրատուի կողմից կազմված գնման առարկաների տեխնիկական և որակական բնութագրերում նշված են գնման առարկաների անվանումները ունեցող կոնկրե՛տ արտադրողի՝ տվյալ բրենդային անվանում ունեցող նյութերի կոնկրե՛տ տվյալները, ինչով բացառում են մեկից ավելի մասնակիցների

մասնակցության հնարավորությունը տվյալ չափաբաժիններին՝ առաջացնելով չհիմնավորված խոչընդոտներ մասնակիցների հավասար մրցակցության համար՝ խախտելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջները:

Ընկերությունը ներկայացված բողոքներով տեղեկացրել է նաև, որ Պատվիրատուն գնման գործընթացը նման խտրական հիմունքներով կազմակերպելով՝ ոչ միայն չի խրախուսում հնարավոր մասնակիցների միջև մրցակցությունը և մասնակիցների շրջանակի ընդլայնումը, որով խախտվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջները, այլև գործընթացը տանում է դեպի ֆինանսական միջոցների ոչ՛ տնտեսող, ոչ՛ արդյունավետ և ոչ՛ էլ օգտավետ ծախսմանը՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջները:

«Խաչպար» ՍՊԸ-ն ի լրումն բողոքների, 29.07.2016թ. գրությամբ Խորհրդին տեղեկացրել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ն պնդում է իր բողոքներով ներկայացված պահանջը, այն է՝ Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը կազմված է խտարական հիմունքներով: «Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացված գրությամբ տեղեկացրել է, որ Ընկերության կողմից իրականացված ախտահանիչ տարբեր միջոցների ուսումնասիրությունները և նրանց տեխնիկական տվյալների համադրումները ցույց են տվել, որ ոչ մի այլ անվանում ունեցող ախտահանիչ միջոցների տվյալներ չեն համապատասխանում Պատվիրատուի կողմից հաղթող ճանաչված «Պրեսեպտ» և «Սանիտել» ՊՀ» անվանումները ունեցող բրենդային նյութերի տվյալներին:

«Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացված գրությամբ հայտնել է, նաև որ ոչ մի ախտահանիչ միջոց, որի ազդող նյութը դիքլորիզոցիանորաթթվի նատրիումական աղն է, ջրում լուծելիս չի անջատում 1,76գ կամ ավելի ակտիվ քլոր, ինչպես պահանջվում է Պատվիրատուի կողմից հրապարակված հրավերի տեխնիկական բնութագրում:

Ելնելով վերոգրյալից՝ «Խաչպար» ՍՊԸ-ն խնդրել է Խորհրդին դադարեցնել գնահատող հանձնաժողովի՝ սույն Ընթացակարգի հրավերը հաստատելու մասին 2016թ. ապրիլի 27-ի թիվ 2 որոշումը:

2. «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ն 22.07.2016թ. գրություններով հայտնել է հետևյալը.

«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայք և պատվաստանյութեր ձեռքբերելու նպատակով կազմակերպված «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին «Խաչպար» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ և հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովի կողմից վերը նշված ընթացակարգի 27-րդ և 33-րդ չափաբաժիններով հայտարարվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ծանուցվել են՝ առաջարկվելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նշված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով ներկայացված ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:

«ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 27-րդ չափաբաժնով պահանջվել էր՝ «Դիքլորոիզոցիանուրային թթվի նատրիումական աղ (50%), 2.5գ ազդող նյութով, 1հաբի լուծման ժամանակ անջատվում է 1.76գ ակտիվ քլոր, դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ)», իսկ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից, որպես համարժեք ներկայացվել էր՝ «Դիմաքս քլոր», որի 1 հաբի լուծման ժամանակ անջատվում է 1,5գ ակտիվ քլոր:

Ընթացակարգի հրավերի 33-րդ չափաբաժնով պահանջվել էր՝ «Էթանոլ 70%, պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0.4%, փաթեթավորումը 1000մլ, ձեռքերի հիգիենիկ, վիրաբուժական մշակման և վիրաբուժական դաշտի մշակման համար», իսկ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից, որպես համարժեք ներկայացվել էր՝ «Դիասեպտիկ 30»:

ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, գնահատման արդյունքների ամփոփման նիստում, «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 27-րդ և 33-րդ չափաբաժնի համար

ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագիրը գնահատել է, որպես հրավերի պահանջներին անհամապատասխան և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 51-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և մասնակցին տրվել է 1 աշխատանքային օր անհամապատասխանությունները շտկելու համար:

Սահմանված ժամկետում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են փաստաթղթեր, սակայն 27-րդ և 33-րդ չափաբաժնի համար ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրերը գնահատող հանձնաժողովի կողմից կրկին գնահատվել են, որպես հրավերի պահանջներին անհամապատասխան, ուստի գնահատող հանձնաժողովը 27-րդ և 33-րդ չափաբաժիններով մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը:

Հաշվի առնելով, որ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի համար առաջնահերթ խնդիր է ներհիվանդանոցային վարակների կանխարգելումը՝ շատ կարևոր է ախտահանիչ նյութերի ձեռքբերման ժամանակ մեծ ուշադրություն դարձնել ապրանքների որակին և տեխնիկական հատկանիշներին:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգի հանձնաժողովի կողմից «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելը իրավաչափ է, իսկ Ընթացակարգն իրականացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

3. ԳԲԽ-76/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 01.08.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Խաչպար» ՍՊԸ-ի 15.07.2016թ. և 20.07.2016թ. ներկայացված բողոքները մերժել:

4. ԳԲԽ-76/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-76/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի և պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի N 1 հավելվածում՝ տեխնիկական բնութագրի «Անվանումը» սյունակում, 27-րդ չափաբաժնով սահմանված է՝ ***«Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ (50%), 2.5գ ազդող նյութով, 1հաբի լուծման ժամանակ անջատվում է 1.76գ ակտիվ քլոր, դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ)***:

3. Ընթացակարգի հրավերի N 1 հավելվածում՝ տեխնիկական բնութագրի «Անվանումը» սյունակում, 33-րդ չափաբաժնով սահմանված է՝ ***«Էթանոլ 70%, պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0.4%, փաթեթավորումը 1000մլ, ձեռքերի հիգիենիկ, վիրաբուժական մշակման և վիրաբուժական դաշտի մշակման համար»***:

4. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, Ընթացակարգի 27-րդ և 33-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Խաչպար» ՍՊԸ-ն:

5. «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 27-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ «***Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ դեղահատեր դյուրալույծ - համամարժեք՝ «Դիմաքս քլոր»***, տեխնիկական հատկանիշները՝ ***ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանուրային թթվի նատրումական աղը, 1 հաբը կշռում է 2,7 գրամ, որի լուծման ժամանակ անջատվում է 1,5 գ ակտիվ քլոր*** և այլն:

6. «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 33-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ ***«Էթանոլ 70%, պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0.4%, փաթեթավորումը 1000մլ*** - համարժեք՝ ***«Դիասեպտիկ 30»***, տեխնիկական հատկանիշները՝ ***պոլիհեքսամեթիլեն – գուանիդինի հիդրոքլորիդ 0,25 %***, փաթեթավորումը 1000մլ պոլիէթիլենային տարաներով:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. հուլիսի 14-ին ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 9 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 27-րդ և 33-րդ չափաբաժինների մասով «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին, մասնավորապես՝ Ընկերության կողմից 27-րդ չափաբաժնի համար, որպես համարժեք ներկայացվել է

Ընկերության կողմից 27-րդ չափաբաժնի համար, որպես համարժեք ներկայացվել է ***«Դիմաքս քլոր»***, տեխնիկական հատկանիշները՝ ***ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանուրային թթվի նատրումական աղը, 1 հաբը կշռում է 2,7 գրամ, որի լուծման ժամանակ անջատվում է 1,5 գ ակտիվ քլոր***, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված է՝ ***«Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ (50%), 2.5գ ազդող նյութով, 1հաբի լուծման ժամանակ անջատվում է 1.76գ ակտիվ քլոր, դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ),*** ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ին 27-րդ չափաբաժնի մասով, իսկ 33-րդ չափաբաժնով Ընկերությանը տրվել է 1 աշխատանքային օր որակավորման փաստաթղթերն ամբողջական ներկայացնելու համար:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. հուլիսի 18-ին ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 10 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ սահմանված ժամկետում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն տեխնիկական բնութագիրը 33-րդ չափաբաժնի մասով չի համապատասխանել հրավերի պահանջներին մասնավորապես՝ Ընկերության կողմից 33-րդ չափաբաժնի համար, որպես համարժեք ներկայացվել է ***«Էթանոլ 70%, պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0.4%, փաթեթավորումը 1000մլ*** - համարժեք՝ ***«Դիասեպտիկ 30»***, տեխնիկական հատկանիշները՝ ***պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0,25%***, փաթեթավորումը 1000մլ պոլիէթիլենային տարաներով, ուստի գնահատող հանձնաժողովը մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ին 33-րդ չափաբաժնի մասով:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդը, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 15.07.2016թ. և 20.07.2016թ. ներկայացրած բողոքները և ի լրումն բողոքի 29.07.2016թ. ներկայացված գրությունը, «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ-ի 22.07.2016թ. գրությունները, «ՆԻԿՀ-16/5-ՇՀԱՊՁԲ-15/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, Ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ

հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետնա՝ Կարգ), հայտնում է հետևյալը.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում եմ հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար ***չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը***.

3) պետք է լինեն ***օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը***.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 9 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 27-րդ չափաբաժնի մասով Ընկերության հայտը մերժվել է, քանի որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին, մասնավորապես՝ Ընկերության կողմից 27-րդ չափաբաժնի համար, որպես համարժեք ներկայացվել է ***«Դիմաքս քլոր»***, տեխնիկական հատկանիշները՝ ***ազդող նյութ է հանդիսանում դիքլորիզոցիանուրային թթվի նատրումական աղը, 1 հաբը կշռում է 2,7 գրամ, որի լուծման ժամանակ անջատվում է 1,5 գ ակտիվ քլոր***, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված է՝ ***«Դիքլորոիզոցիանաթթվի նատրիումական աղ (50%), 2.5գ ազդող նյութով, 1հաբի լուծման ժամանակ անջատվում է 1.76գ ակտիվ քլոր, դեղահատեր դյուրալույծ (վարակազերծիչ), 1 հաբը կշռում է 5 գրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.07.2016թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 10 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 33-րդ չափաբաժնի մասով Ընկերության հայտը մերժվել է, քանի որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանել հրավերի պահանջներին, մասնավորապես՝ Ընկերության կողմից 33-րդ չափաբաժնի համար, որպես համարժեք ներկայացվել է ***«Դիասեպտիկ 30»***, տեխնիկական հատկանիշները՝ ***պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0,25%***, փաթեթավորումը 1000մլ պոլիէթիլենային տարաներով, իսկ հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված է՝ ***«Էթանոլ 70%, պոլիհեքսամեթիլեն-գուանիդինի հիդրոքլորիդ 0.4%, փաթեթավորումը 1000մլ»:***

Այսպիսով, Ընթացակարգի հրավերով սահմանված և Ընկերության կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերի ուսումնասիրության արդյունքում Խորհուրդը գտնում է, որ բողոքաբերի կողմից չի հիմնավորվել ինչպես իր կողմից առաջարկվող ապրանքների համապատասխանությունը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին, այնպես էլ՝ Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերը Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին ոչ համապատասխան կազմված լինելու փաստը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Խաչպար» ՍՊԸ-ի՝ 15.07.2016թ. և 20.07.2016թ. ներկայացված բողոքները մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գևորգ Հայրապետյան**

Անդամ՝ **Գոռ Գրիգորյան**